ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2019 թվականի հուլիսի 3-ի N 2-Լ

Լսելով աշխատակազմի և միջազգային համագործակցության հարցերով պրոռեկտոր Արա Երեմյանի «Մանկավարժական կրթությունը թվային հասարակությունում. մարտահրավերները, խնդիրները, հեռանկարները» խորագրով միջազգային մեդիաֆորումի արդյունքների մասին հաղորդումը՝

Գիտական խորհուրդը որոշում է.

1. ԱՊՀ երկրների և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության առաջատար մանկավարժական բուհերի մասնակցությամբ 2019թ. հունիսի 6-ին և 7-ին կայացած «Մանկավարժական կրթությունը թվային հասարակությունում. մարտահրավերները, խնդիրները, հեռանկարները» խորագրով միջազգային մեդիաֆորումի արդյունքների մասին աշխատակազմի և միջազգային համագործակցության հարցերով պրոռեկտոր Արա Երեմյանի հաղորդումը ընդունել ի գիտություն։

2. Հավանություն տալ ԱՊՀ երկրների և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կրթական տարածքում Մոսկվայի մանկավարժական պետական համալսարանի հանրային խորհրդի՝ որպես ԱՊՀ երկրների մանկավարժական կադրերի պատրաստման բազային կազմակերպության՝

ա/ մանկավարժական կրթության մասին հանրային զեկույցին,

բ/ թվային մանկավարժական համալսարանի և թվային դպրոցի ռազմավարության նախագծին։

3. Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանին գործադրել անհրաժեշտ միջոցներ թվային հասարակությունում մանկավարժական կրթությունը փոխակերպելու գործընթացին մասնակցելու ուղղությամբ։

4. Ըստ ապագայում քննարկվող հարցերի հաջորդականության՝ հանդես գալ մանկավարժական համալսարանների և կրթական գործընթացների թվայնացման

ճանապարհային քարտեզին վերաբերող առաջարկներով, մասնավորապես, բայց չսահմանափակվելով՝

- հեռահաղորդակցության տիրույթում՝ ինտերնետային ամպում բուհերի, գիտական կենտրոնների, շահակից կազմակերպությունների, հանրակրթական և միջին մասնագիտական կրթության ոլորտի կազմակերպությունների փոխազդեցության հիմնական սխեման մշակելու մասին,

- ցանցային և կլաստերային կրթության արդյունավետ կառավարման համար գիտական և կրթական լաբորատորիաների կոլեկտիվ օգտագործման կենտրոնների կառավարման էլեկտրոնային համակարգեր ստեղծելու հնարավորությունների մասին,

- իրավական կարգավորումների վերաբերյալ,

- շահառուների շրջանում համապատասխան մակարդակի հմտությունների ձևավորման վերաբերյալ։

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ